

17.
U-59

ԱՆԿԵՂԾ ԽՕՍՔԵՐ



ՏՊԱՐԱՆ ՏԱՐՈՆ

ԷԶՐԵՓԻԿԵ ՊԵՅՐՈՒԹ—Լիբանանի

1934

12.02.2013

2013 JUL 8 S

4709



63476-67

ԱՆԿԵՂԾ ԽՕՍՔԵՐ

Երևտասարգ բարեկամս, պատենական շրջանդ բոլորած ըլլալով՝ հասած ես կեանքի ամենալավը - ունի ու խօստմնալից շրջանին : Այլեւս կեանքը քեզի համար նոր նշանակութիւն ունենալ սկսած է : Քու ներքին ուժերդ և թաքուն կիրքերդ սկսած են արթննալ՝ իրենց կարգին արթնցնելով անմարելի պապակ մը ու խօրին տենջ մը կեանքի վայելքներուն հանդէպ : Բնութեան արթնցուցած այդ բուն փափաքներէն մզուած , և աշխարհի հրապուրիչ խոստումներէն շլացած կեանքը ապրիլ սկսելու վայրկեանէն կ'ուզե՞ս ճանչնալ ա՜յն ճամբան , որ քեզ կրնայ առաջնորդել երջանկութեան ու լաւագոյն վայելքներու , կ'ուզե՞ս գիտնալ թէ ինչպիսի դիրք մը պէտք է բռնել այսպիսի կացութեան մը հանդէպ , երբ մանաւանդ , սեռային , այսինքրն երիտասարդական բացավառող ցանկութիւնըն ու կիրքը գոհացնելու մարմանչն ըլլայ խնդրոյ առարկան :

Հոս միջանկեալ կերպով կ'ուզենք յայտնել թէ ամուսնութիւնը պատուական է , սուրբ ու բնական :

նան վիճակ ունեցող ուէ երիտասարդի երկնատուր
իրաւունքը : Բայց միմիայն մարմնական կերքն ու
ցանկութիւնը գոհացնելու համար եղած ամուսնու-
թիւնը գոհիկ է ու անասնական , ոչ մարդավայել
ու . կործանարար է բառին լայն նշանակութեամբը :
Բայց մեր բուն խօսքը անժուժկալութեամբ և հան-
րատունը յաճախելով կեանքի փճացումին ու այ-
լատեումին կը պատկանի : Այսպիսի լպիրշ ու ստոր
նացուցիչ արարքի ձեռնարկող մը կը մեղանչէ Աս-
տուծոյ դէմ , իր անձին դէմ ու ընդհանուր մարդ-
կութեան դէմ :

Ա. իր մեղանչէ Աստուծոյ դէմ . քանզի մարդկային
երջանկութեան ու բարօրութեան համար Աստուծոյ
հաստատած սուրբ օրէնքը , («չնութիւն մի ըներ»)ը
ստանալովսած կ'ըլլայ : Ուստի մեղանչողը Աստուծոյ
հաշիւ պիտի տայ և իր պատիժը անխուսափելի է :
Բ. իր վեղանչէ իր անձին դէմ , քանզի իր մաքրու-
թիւնն ու պատիւը , երիտասարդութիւնն ու առող-
ջաւթէնը ծախած կ'ըլլայ խաբուսիկ զրուարձու-
թեան մը փոխարէն , որուն աղէտաբեր արդիւնքը
անխուսափելի է : Իսկապէս երիտասարդ մը այսպի-
սի անխոհեմ քայլ մը առնելով բարոյապէս թէ ֆիզի-

քապէս իր անձին դէմ մեղանչած կ'ըլլայ : «Երիտա-
սարդ մը իր այդ ցանկութիւններուն գոհացում տա-
լուն մէջ հաճոյք կը գտնէ , ուստի որքա՞ն մեծ յիմա-
րութիւն է ամբողջ կեանքի տեւողութեան , ամուս-
նական մաքուր յարկի մը տակ այդ հաճոյքը ըմբռնի-
նելու երկար պատահութիւնը փոխել միայն մի քա-
նի վայրկեան պոռնիկի մը զրկին մէջ անասնանա-
լուն հետ : Յաճախ այդ ճամբէն քաղողին վախճանը
անկարողութեան , Սիֆիլիսի , չերամամբողջեան
կամ թոքախտի ժառանգումն է :

«Յաճախ պատանիներ իրենց կուսութիւնը , անբիծ
այտերը սրտնք մօրկան մը քաղցր համբոյրէն զատ
ու մէկ շրթունքի հպումին տակ զրգիւս դգացած են ,
կերթան յանձնել անանկներու , սրտնց շուրթերը
մարդկային ամէն ինկածութիւն շօշափած են և որ
շատ յաճախ հիւանդոտ ու վաւաշոտ բերաններէ
դեռ նոր զատուած են : » Կարժէ՞ ուրեմն , որ երի-
տասարդ մը՝ կեանքէ աւելի թանկագին եղող իր բա-
րոյական մաքրութիւնը , ինչպէս և իր ֆիզիքական
առողջութիւնը խորտակէ վայրկեանական հաճոյքի
մը սիրոյն , եթէ սրբաողծութիւն չէ անասնանալը
հաճոյք սրակել : Կ'արժէ՞ ամբողջ կեանք մը գարշե-
լի և անտանելի դարձնել , լոկ մի քանի վայրկեանի

խաբուսիկ ու վտանգաւոր զուարճութեան մը փոխարէն:

Ս. Գիրքը կ'ըսէ «Պտոնկութենէ վախէք. ամէն մեղք զոր մարդ կը գործէ, իր մարմինէն զուրս է, բայց ան որ կը պտոնկի, իր մարմինին դէմ կը մեղանչէ:» Սոգոմուն խմաստունի հետեւեալ խօսքերը ուշադրութեան արժանի են. «Որդեալ իմ քեզ գէշ կնոջմէն, օտար կնոջ շողոքորթող լեզուէն պահէ: Վասնզի պտոնիկ կնոջ պատճառաւ մարդ մինչեւ պատառ մը հացի կարօտ կ'ըլլայ: Հնա՞ր է որ մէկը իր ծոցը կրակ դնէ, ու հանդերձները չայրին. հնա՞ր է որ կրակի կայծերուն վրայ քայլէ, ու անոր ոտքերը չայրին: Ասոր պէս է կնոջ քով գացողն ալ. ով որ անոր դաշի անմեղ չ'ըլլար: Կնոջ հետ չնութիւն ընողին ինկքը պակաս է. այս բանը ընողը իր հոգին կը կորսնցնէ: Անիկա վէրք ու անարգանք կը գտնէ, եւ անոր նախատինքը անշնչելի է: Ան (երիտասարդ) կնոջ ետէն սպանդանոց դացող արջառի պէս, պատժուելու դացող կապուած յիմարի մը պէս կ'երթայ մինչեւ որ նետը անոր լեարդը ծակէ, ինչպէս թրուհուն մը արտւարաւով դէպի ծուղակը կ'երթայ, ու չի դիտեր որ անիկա իր հոգւոյն համար լարուած է:

«Եւ հիմա, ո՞վ որդիք, ինծի մտիկ ըրէք, ու իմ բերնիս խօսքերուն ականջ դրէք: Ձեր սիրտը անոր (պտոնիկին) ճամբաներուն չխոտորի, և անոր շաւիղներուն մէջ չի մուրրի, վասնզի անիկա շատերը խոցոտեց ու կործանեց, և անոր բոլոր մեղուցած մարդիկը զօրաւոր էին: Անոր տունը դժոխքին ճամբաներն է, անոնք մահուան շտեմարանները կ'իջնեն:

* * * * *

Անհիմն է ըսել թէ մարմնոյն բոլոր գործարանները զարգացնելու և առողջ պահելու համար անհրաժեշտ է անոնց յաճախակի գործածութիւնը: Մինչ սեռային գործարանները ընդհակառակը կը վատթարանան և կը տկարանան նմանօրինակ գործածութեամբ: Տարափոխիկ հիւանդութիւններն ալ իրենց աւերները կը գործեն ամէն անոնց մէջ որ կը համարձակին Աստուածային և ընկերային պատուական օրէնքը ոտնակոխ ընելով շնալ:

Ձերմամբդութիւնը որ ստանցմէ ամէնէն աւելի ընդհանրացածն է, շատ մը կիներու ամլութեան պատճառ կը գտնայ: Նմանապէս հազարաւոր նրոսծին մանուկներու կուրութիւնը հետեւանքն է ջերմամբդութեան զոհ դացած հօր կամ մօրը մեղքին:

Այս ախար իր աւերակները կը գտնուէր երկար ժամանակ՝ ենթարկելով զոհերը շերմամիզութեան՝ բոմաթիզմի, անկարողութեան (այդ մարդոց մէջ), երիկամային և այլ հիւանդութեանց : Աւելի յաճախաբէս և ան-
սելի է Փրանկախտ (Սիֆիլիս կամ ֆիբէնկի) կոչուած զոգուելի ախար որ պատճառ կ'ըլլայ հազարաւոր այ-
րերու, կիներու և անմեղ մանուկներու մարմնոյն ու
կեանքին քայքայման՝ վաղահաս ծերութեամբ կամ
ցաւագարութեամբ : Շուացողը իր անձին գէմ կը դա-
ւաճանէ՝ ենթարկելով ինքզինք վերոյիշեալ դարչելի
ախտերու և անոնց անխուսափելի հետեւանքը եղող
այլազան և երկարատեւ զժրադրութեանց :

Որքան երիտասարդներ կան որոնք բարոյական և
սեռային վատ կեանքի չափանիշ մը կ'ընդունին ի-
րենց համար, իսկ իզական սեռէն կ'ակնկալեն բո-
լորովին տարբեր չափանիշ մը : Կինը պէտք է ժուժ-
կալ կեանք մը վարէ առանց շեղած ըլլալու առաքի-
նութեան ճամբէն, հակառակ պարագային նէ կը նը-
կատուի ինկած թշուառական մը միանգամ ընդ միշտ :
Միւս կողմէն ամէն նւիրութեամբ ի անբարոյակա-
նութեան զոհ երիտասարդ մը ընդունելի է պատ-
ուաւոր մարդոց շրջանակին մէջ եթէ միայն զորք մը
և լաւ եկամուտ մը ունի : Այսպիսի մտայնութիւն
մը ամէն ողջմիտ զաղափարի տէր մարդուն մէջը

պէտք է արթնցնէ բոլոր մը որ հնչէ ընկերութեան
ամէն խաւերուն մէջ, մինչեւ որ արդարադատ ոգի
մը ստեղծուի ամէնուրեք :

Գ. կը մնորակէ շնորհամուր մարդկութեան դէմ : Աշ-
խարհս լեցուն է այնպիսի մարդոցմով, որոնք ըն-
տանեկան յարկի սրբութեան և աշխարհի բարոյա-
կանութեան ստորնացած ապականիչները եղած են :
Աշխարհի մեծագոյն պատուհասներն են անոնք :
Իրենք ապականած ըլլալով, շատ մը անմեղ երիտա-
սարդներ միեւնոյն ապականութեան ճամբան կ'ա-
ռաջնորդեն, սրպէսզի միասին ապականութեան
յաւիտենական վիճին մէջ լսարասուղուին : Ազգեր ու
նամանաւանդ հայ ազգը պէտք ունի բարոյապէս ու
ֆիզիքապէս մաքուր երիտասարդներու, որոնք բա-
րոյական մոլութիւններէ ու ֆիզիքական ախտերէ
զերծ, քաջաոգով սերունդ մը կրնան յառաջ բերել :
Բացց այն երիտասարդը որ անբարոյական ու ան-
ժուժկալ կեանք մը կը վարէ, ինք տուժելէ զատ
իւր ազգին կը թողու թէ ֆիզիքապէս թէ բարոյա-
պէս ախտաւորուած սերունդ մը, ու այսպէսով չա-
րիքը բաղմապատկուած կ'ըլլայ : Այս օր ազգին
յոյսը եղող երիտասարդներէն ամանք, դարերէ ի վեր
հայ ազգին պահպանման մեծագոյն ազդակին՝ ըն-
տանեկան սրբութեան գէմ կը մեղան չեն : Օ՛հ ու-

րեմն , ո՛վ հայ երիտասարդ , ի սէր ազգիդ , ի սէր ազգիդ Աստուծոյն պատերազմէ բարի պատերազմը , քու և ազգիդ մեծագոյն թշնամիին՝ անբարոյակա- նութեան ու անժուժկալութեան դէմ : Մաքուր եղի՛ր :

Երիտասարդ բարեկամս , ով որ ալ ըլլաս , որ- քան ալ ինկած ըլլաս ու գերիվարուած անասնական կիրքերէդ , կայ մէկը որ կարող է քեզ փրկել և մաք- րել բոլոր հար ունակութիւններէ՝ տալով քեզի կա- տարեալ յաղթութիւն : Յիսուս՝ քու կենդանի փր- կիչդ կարող է քեզ կեանքի ամենաստուրին մակար- դակէն իսկ վերցնել , բարձր և մաքուր կեանքի մը առաջնորդել : Նա կարող և պատրաստ է սրտէդ բո- լոր մեղքերը սրբելու , միաքգ մաքրելու ու հոգիդ ազնուացնելու : Յիսուս՝ կարող է քու մէջդ այնպի- սի հրաշք մը գործել , որուն նմանը մարդկային ո՛չ մէկ միջոցով կարելի է ձեռք ձգել : Այդ հրաշքը կը գործուի ապաշխարհութեամբ ու հաւատքով : Յի- սուս՝ ինկածը կը վերցնէ , մեռածը կը վերակենդա- նացնէ , Ան իրական կեանքն ու ճշմարիտ երջանկու- թիւնը կը պարգեւէ ամէն անոնց , որոնք իրենց մեղքերովը ու յուսահատութեամբը իրեն կը դիմեն

կատարեալ վստահութեամբ : Անձնական փորձա- ութեամբդ գիտես թէ ճշմարիտ սէրն ու իրապէս տեսական երջանկութիւնը մինչեւ հիմա հեռ կրցած ունենալ : Յիսուսի դիմէ : Ան՝ քեզի կենաց երջան- կութիւն պիտի պարգեւէ , ու աշխարհի վրայ եր- ջանկագոյն մարդը պիտի կրնաս ըլլալ : Յիսուսի քե- զի տուած զօրութեամբ կարող պիտի ըլլաս քեզ կաշ- կանդող բոլոր մոլութիւններուդ յաղթել : Այսպէսով ոչ թէ մարդկային մակաբոյծ մը , այլ՝ անձիդ , ըն- տանիքիդ , ազգիդ , մէկ խօսքով , ընդհանուր մարդկութեան բարօրութեան , ազնուացման ու երջանկութեան ազդակներէն մէկը պիտի կրնաս ըլլալ :

Մտերիմ բարեկամներէս մէկը , խումբ մը ե- րիտասարդներու ներկայութեան հետեւեալ վրկա- յութիւնը տուաւ : «Ժամանակ մը գիշութեան կա- տարեալ գերին եղած էի : Բայց վերահասու ըլլալով ինծի սպաննացող վտանգին , բժիշկներու եւ բա- րեկամներու թելադրութեամբ աներեւակայելի մի- ջոցներու դիմեցի որպէսզի այդ մտութենէն ա- զատուիմ , բայց ի գուր : Յուսալքուած ու քայ- քայուած իբրեւ վերջին միջոց Յիսուսի առաջնոր- դուեցայ : Այլևս փրկուած էի : »

Այս օր նոյն երիտասարդը , իբրեւ կենդանի
վկայ Գրիստոսի փրկելու գօրութեան , մեր մէջ կը
գտնուի , ու շատ մը յուսալքութեան յոյսի և կեն-
դանութեան աղբիւրին՝ Յիսուսի կ'առաջնորդէ :

Ուրիշ երիտասարդ մը որ ծխելու և մանաւանդ
անժուժկալութեան գերի դարձած՝ բոլորովին
յուսահատած էր իր ապերձանիկ կեանքէն : Օր մը
պատահմամբ աւետարան մը կը տրուի իրեն : Ու ա-
ւետարանին Յիսուսը՝ երիտասարդը իր բոլոր չար
ուռաւորութիւններէն ու պժգալի մոլութիւններէն կը
փրկէ : Այս օր այդ երիտասարդը ճանչցողներ
կրնան վկայել թէ ան փոխուած , նորոգուած ու
փրկուած երիտասարդ մըն է :

Յիսուս շատ մը երիտասարդներու կեանքը
մաքուր պահած է , ու շատ մը ինկածներ փրկած :
Ուրեմն , ով երիտասարդ Յիսուսի դիմէ՝ :



ՀՀ Ազգային գրադարան



NL0152055

4409

17

24-59